

Բորյա Չիլինգարյան
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի անդրազգային, ինչպես նաև կոռուպցիոն
այլ բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի
պարտականությունները կատարող, Եվրասիա Միջազգային
համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ boryachilingaryan@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.1-38

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ. ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ուսումնասիրվում է անմեղության կանխավարկածի տեղն ու նշանակությունը իրավական կանխավարկածների համակարգում՝ կենտրոնանալով դրա էության և բովանդակության վրա: Հետազոտության հիմնական խնդիրը անմեղության կանխավարկածի բովանդակային բազմաշերտության պարզաբանումն է, քանի որ այն հաճախ ընկալվում է միանշանակ՝ ունենալով խորը իրավական, սոցիալական և բարոյական նշանակություն: Աշխատանքի նպատակն է վերլուծել անմեղության կանխավարկածը՝ որպես միջնորդային իրավական սկզբունք, պարզաբանել դրա դատավարական և նյութաիրավական առանձնահատկությունները, ինչպես նաև ցույց տալ այս սկզբունքի կարևորությունը արդարադատության համակարգում: Հոդվածի նորույթը կայանում է անմեղության կանխավարկածի՝ ոչ միայն դատավարական, այլև նյութաիրավական բնույթի բացահայտման և դրա՝ որպես իրավական ու հումանիստական արժեքի ներկայացման մեջ, ինչը հաճախ դուրս է մնում այլ հետազոտությունների շրջանակներից: Հոդվածի գործնական նշանակությունը դրսևորվում է այն հանգամանքում, որ անմեղության կանխավարկածի բովանդակության և կիրառման առանձնահատկությունների հստակե-

ցումը թույլ կտա բարձրացնել արդարադատության արդյունավետությունը, կանխել իշխանության չարաշահումները, ինչպես նաև երաշխավորել մարդու իրավունքների պատշաճ պաշտպանությունը: Սա հնարավորություն է տալիս թե՛ իրավաբանական պրակտիկայում, թե՛ օրենսդրության զարգացման գործընթացներում ավելի հստակ հասկանալ անմեղության կանխավարկածի կիրառության սահմաններն ու բնույթը:

Հիմնաբառեր. իրավական կանխավարկած, անմեղության կանխավարկած, դատավարական սկզբունք, նյութաիրավական սկզբունք, իրավական պետություն, արդարադատության արդյունավետություն, միջճյուղային սկզբունք, մարդու իրավունքների պաշտպանություն:

Ներածություն

Անմեղության կանխավարկածը ժամանակակից իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է: Այս սկզբունքի էությունն ամենապարզ ձևով մեկնաբանելի է հետևյալ կերպ. յուրաքանչյուր մեղադրյալ պետք է համարվի անմեղ մինչ այն պահը, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրինական կարգով և չի հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս դրույթը հստակ ամրագրում է ստացել ժամանակակից պետությունների ազգային օրենսդրությունների մեջ, մասնավորապես՝ սահմանադրություններում և քրեական դատավարության օրենսգրքերում: Ազգային օրենսդրություններից զատ այն ամրագրվել է նաև միջազգային փաստաթղթերում. 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (հոդված 11¹), 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (հոդված 142) և տարածաշրջանային կոնվենցիաներ (Zhiyuan, 2023, էջ 5–6):

Գտնում ենք, որ այս սկզբունքի համընդհանուր իրավական ամրագրումն արդեն իսկ վկայում է այն մասին, որ անմեղության կանխավարկածը միջազգային հանրության կողմից ճանաչված է որպես հիմնարար իրավական ստանդարտ, իսկ դրա իրացումը՝ մարդու անօտարելի իրավունք: Սահմանադրաիրավական հարթությունում այն ենթադրում է, որ պետությունն ունի պարտավորություն՝ հարգելու և ապահովելու այս սկզբունքի իրացումը՝ որպես արդարադատության հիմք, և անհատի՝ անհիմն քրեական հետապնդումից պաշտպանության կարևորագույն երաշխիք: Միևնույն ժամանակ, չնայած սույն սկզբունքի մեկնաբանության տեսանկյունի պարզությանը, անմեղության կանխավարկածը բովանդակային առումով բարդ և բազմաշերտ է:

Իրավական կանխավարկածների համակարգում անմեղության կանխավարկածը զբաղեցնում է հատուկ տեղ՝ որպես իրավունքի բազմաթիվ ճյուղերում դրսևորվող և արդարադատության կենսագործումը երաշխավորող սկզբունք: Ներկայացված թեզիսն ընդգծում է անմեղության կանխավարկածի սկզբունքի բազմաշերտ էությունը: Մեր կարծիքով, պետք է բացառել սկզբունքի դիտարկումը որպես բացառապես քրեական դատավարությանը բնորոշ տեխնիկա-իրավական գործիք, այլ ընդունել այն որպես համապար-

փակ սահմանադրաիրավական արժեք: Իրավական կանխավարկածների շարքում վերջինիս առանձնահատուկ դիրքը պայմանավորված է նրանով, որ այն միաժամանակ ուղղված է արդարադատության ու արդարության ապահովմանը և արտահայտվում է իրավունքի տարբեր ձյուղերում՝ համախմբելով դրանք հիմնարար սկզբունքների մակարդակում:

Մեթոդ

Սույն հոդվածի կատարման ընթացքում օգտագործվել են մի շարք մեթոդներ, այդ թվում՝ տեսաիրավական վերլուծության, համեմատության, պատմաիրավական, համակարգային, վերլուծական, աքսիոլոգիական և դասակարգման մեթոդները:

Տեսական-իրավական վերլուծության մեթոդն օգտագործվել է իրավական կանխավարկածների, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի հասկացության և էության ուսումնասիրման համար: Կատարվել է հասկացությանը ապարատի, անմեղության կանխավարկածի իրավական բնույթի և հատկանիշների վերլուծություն, ինչը թույլ է տվել բացահայտել այն որպես բազմաշերտ իրավական երևույթ:

Համակարգային մոտեցումը թույլ է տվել ներկայացնել անմեղության կանխավարկածն իբրև իրավական կանխավարկածների համակարգի բաղադրիչ և բացահայտել դրա դերը իրավական սկզբունքների ընդհանուր կառուցվածքում, ինչպես նաև փոխկապակցվածությունը այլ նորմերի և իրավական ինստիտուտների հետ:

Վերլուծական մեթոդը կիրառվել է անմեղության կանխավարկածին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության ժամանակ: Դա հնարավորություն է տվել բացահայտել դրա իրականացման պրակտիկ խնդիրները և ձևակերպել գործնական նշանակության վերաբերյալ եզրահանգումներ:

Աքսիոլոգիական (արժեքաբանական) մեթոդն օգտագործվել է անմեղության կանխավարկածը ոչ միայն որպես գուտ իրավական կատեգորիա, այլև հումանիստական և բարոյական արժեք դիտարկելու ժամանակ: Սա թույլ է տվել բացահայտել դրա նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության արդարացի իրականացման տեսանկյունից:

Դասակարգման մեթոդը կիրառվել է իրավական կանխավարկածների տեսակները դիտարկելիս և համակարգելիս, ինչը թույլ է տվել տարբեր հիմքերով (նյութաիրավական և դատավարական, ձյուղային, միջձյուղային և համաիրավական) որոշել անմեղության կանխավարկածի տեղը մյուս իրավական կանխավարկածների շարքում:

Այսպիսով, ներկայացված հետազոտությունը հիմնված է վերոնշյալ մեթոդների համալիր կիրառության վրա, ինչը հնարավորություն է տվել համակողմանի ուսումնասիրել և բացահայտել անմեղության կանխավարկածի էությունը, իրավաբանական բովանդակությունը, գործառնությունն ու նշանակությունը իրավական համակարգում:

Արդյունքներ

Անմեղության կանխավարկածի էության լուսաբանմանն անդրադարձել են բազմաթիվ հայ և օտարերկրյա հեղինակներ: Իրավական կանխավարկածների թվում հատուկ դիրք և դեր ունի անմեղության կանխավարկածը: Սույն սկզբունքի՝ իրավական կանխավարկածների շարքում զբաղեցրած հատուկ դիրքը պայմանավորված է դրա՝ արդարադատության հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքների պաշտպանության և արդար դատաբանության ապահովման հետ ուղղակիորեն կապված լինելու հանգամանքով: Ի տարբերություն այլ իրավական կանխավարկածների, որոնք հիմնականում ծառայում են իրավաբանական փաստերի ապացուցման գործընթացը հեշտացնելուն, անմեղության կանխավարկածի նպատակն է ապահովել անձի պաշտպանությունը անհիմն քրեական պատասխանատվության ենթարկվելուց: Այս հանգամանքը մասնագիտական շրջանակներում բուռն քննարկումների առիթ է տվել և շարունակում է տալ, քանի որ այս հիմքով որոշ հեղինակներ անմեղության կանխավարկածը համարում են ճյուղային՝ որպես քրեադատավարական սկզբունք, իսկ մյուսները՝ համաիրավական:

Կարծում ենք, որ այստեղ ի հայտ է գալիս անմեղության կանխավարկածի սկզբունքային տարբերությունը մյուս իրավական կանխավարկածներից: Վերջիններս հիմնականում կրում են գործառնական բնույթ՝ նպատակ ունենալով դյուրացնել ապացուցման գործընթացը և հանդես գալ որպես իրավակիրառ պրակտիկայի տեխնիկական գործիք: Մինչդեռ անմեղության կանխավարկածը հետապնդում է արժեքային նպատակ առավելագույն մակարդակով՝ պաշտպանել անհատին անհիմն պատասխանատվության ենթարկվելուց: Այն բարձրացվում է արդարադատության հիմնարար սկզբունքի աստիճանի՝ իրավապահ մարմինների և դատարանների գործունեության մեջ ներմուծելով հումանիստական չափում:

Անմեղության կանխավարկածի առանձնահատկությունների թվում պետք է նշել այն, որ վերջինս ոչ միայն զուտ պարզեցնում է դատավարական ընթացակարգերը, այլև հավասարակշռում է արդարադատությունը: Մեղադրանքի կողմն ունի գերակա դիրք, քանի որ դրանում ներգրավված են վարույթի հանրային 2 մասնակից՝ դատական վարույթին մասնակցող դատախազը, քննիչը: Մինչդեռ մեղադրյալը գտնվում է պաշտպանության դիրքում՝ հաճախ չունենալով բավարար ռեսուրսներ իր անմեղությունն ապացուցելու համար: Անմեղության կանխավարկածը սահմանում է առանցքային դատավարական պահանջ. մեղքի ապացուցման ողջ պատասխանատվությունը կրում է մեղադրանքի կողմը, իսկ բոլոր չփարատված կասկածները մեկնաբանվում են մեղադրյալի օգտին: Տվյալ դրույթը հաստատում է արդարացի հավասարակշռություն դատավարական կողմերի միջև: Սահմանադրական երաշխիքների տեսանկյունից ապացուցման բեռի՝ մեղադրանքի կողմի վրա դրվելը և չփարատված կասկածները մեղադրյալի օգտին մեկնաբանելու պահանջը նպաստում է կողմերի ի սկզբանե անհավասար դիրքերի հավասարեցմանը: Սա պարզապես գործընթացային տեխնիկական կանոն չէ, այլ անձի՝ պետական մեղադրական մեխանիզմի ճնշումից պաշտպանելու լայն

սկզբունքի դրսևորում է: Նման պահանջի շնորհիվ դատական գործընթացը դառնում է առավել օբյեկտիվ և արդար, իսկ դատական սխալի ռիսկը՝ նվազագույնի հասցված: Նշանակում է, որ անմեղության կանխավարկածն ազդում է իրավունքի մեկնաբանության վրա: Եթե քրեական կամ դատավարական նորմերը միանշանակ չեն, ապա դրանց մեկնաբանությունը պետք է հիմնվի անմեղության կանխավարկածի սկզբունքի վրա: Դա նշանակում է, որ եթե ապացույցներն ունեն երկակի մեկնաբանություն, ընտրվում է այն տարբերակը, որը բխում է մեղադրյալի շահերից:

Մեկ այլ առանձնահատկություն է այն, որ անմեղության կանխավարկածն, ի տարբերություն բազմաթիվ այլ իրավական կանխավարկածների, ամրագրված է թե՛ ազգային (երկրի հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ և ոչ միայն), թե՛ միջազգային մակարդակով (Berisha, 2020, էջ 249): Ժամանակակից իրավական համակարգերը ամրագրում են այս սկզբունքը՝ այն համարելով հիմնարար և կենսականորեն անհրաժեշտ՝ արդար դատաքննության իրավունքի իրացման համար: Մասնավորապես, ընդգծվում է, որ անմեղության նույնիսկ նվազագույն հավանականությունը չի կարող անտեսվել, որպեսզի կանխվի անմեղ անձի դատապարտման անուղղելի սխալը: Այս միտքն արտահայտում է բարոյահենք իրավական հիմնադրույթ. անգամ արդարադատության բարեհաճ նպատակների համար անթույլատրելի է «գոհաբերել» անմեղ անձի: Իրավական պետությունում ազատության և արդարության արժեքներն այն աստիճան բարձր են, որ արդարադատության համակարգը պարտավոր է ընդունել որոշակի իրավական անորոշություն՝ միայն թե բացառի անմեղի դատապարտման հնարավորությունը: Այս մոտեցումը քրեական դատավարությունում սահմանում է ապացուցման չափազանց բարձր նշանոդ և միաժամանակ արդար դատաքննության երաշխիքների ձևակերպման գործընթացում հանդես է գալիս որպես էթիկական ուղենիշ օրենսդրի համար:

Անմեղության կանխավարկածի կարևորությունն ընդգծվում է դրան վերագրված իրավական և սոցիալական նշանակալիությամբ: Ըստ Կ. Ա. Բաուժի-ցի (2019), որի հետ համակարծիք ենք, անմեղության կանխավարկածը քրեական դատավարության համակարգաստեղծ սկզբունքներից է: Այն դիտարկվում է որպես «հիմնարար իրավական կառուցվածք, որի շուրջ ձևավորվում է քրեական դատավարության ամբողջ համակարգը» (էջ 176-177): Քրեական դատավարությունը՝ սկսած ապացույցների հավաքումից մինչև դատավճռի կայացում, կառուցվում է այս սկզբունքի վրա: Այն ուղղորդում է օրենսդրության զարգացումը՝ պահանջելով կատարելագործել նորմերը՝ դրանք համապատասխանեցնելով իր պահանջներին (օրինակ՝ բացառել այնպիսի ընթացակարգեր, որոնք խախտում են մեղադրյալի՝ անմեղ համարվելու իրավունքը):

Անմեղության կանխավարկածն ունի բարձր սոցիալական նշանակություն: Այն ձևավորում և ժամանակի ընթացքում կատարելագործում է ինչպես իրավաբանների մասնագիտական իրավագիտակցությունը, այնպես էլ հասարակության իրավական գիտակցությունը: Վարույթի հանրային մասնակիցները՝ դատախազը, քննիչը, վարույթին ներգրավված անձինք, մասնավորապես՝ դատավորը և այլ պաշտոնատար անձինք, սովորում են մեղադրյալի

նկատմամբ լինել անաչառ և հարգել նրա իրավունքները: Հասարակությունը սովորում է դրսևորել պատշաճ սոցիալական վարքագիծ մեղադրյալի նկատմամբ՝ զերծ մնալ մեղադրանքներ առաջադրելուց, մինչև դատարանը չհաստատի մեղավորությունը:

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքն իրականացնում է նաև հանրային դաստիարակչական գործառույթ: Այն նպաստում է իրավագիտակցության ձևավորմանը՝ քաղաքացիների մեջ արմատավորելով մեղադրյալի՝ կանխավարկածով անմեղ լինելու նկատմամբ հարգանք: Ժողովրդավարական պետությունում ոչ միայն դատարանները, այլև հասարակության յուրաքանչյուր անդամ պարտավոր է զերծ մնալ վաղաժամ մեղադրական գնահատականներից: Ընդունելով այս սկզբունքը՝ սոցիալական միջավայրը ձևավորում է անհատի իրավունքների նկատմամբ հանդուրժողականություն և հարգանք, ինչը վերջնարդյունքում ամրապնդում է իրավական համակարգի նկատմամբ վստահությունը և արդարության գաղափարը:

Պատահական չէ, որ անմեղության կանխավարկածն անվանում են իրավական պետության առանցքային չափանիշներից մեկը: Ինչպես նշում են Է. Ա. Մամոնտովան և Դ. Ա. Դյատչինան, անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ժամանակակից իրավական պետության հիմնական հատկանիշն է, իսկ անմեղության կանխավարկածն այս պաշտպանության իրավական երաշխիքներից մեկն է (Мамонтова, Дятчина, 2022, էջ 93–95): Քննության առնելով հեղինակի տեսակետը՝ կարելի է հավաստել, որ տրված բնութագիրն ընդգծում է անմեղության կանխավարկածի սահմանադրարվական նշանակությունը: Իրավական պետությունում անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանության աստիճանը հանդիսանում է իրավունքի գերակայության իրական գոյության չափանիշ, և անմեղության կանխավարկածն այս պաշտպանության հիմնասյուներից մեկն է: Այս սկզբունքը հանդիսանում է իրավական պետության վիճակի ցուցիչ. այնտեղ, որտեղ անմեղության կանխավարկածը հետևողականորեն պահպանվում է, իշխանությունը սահմանափակված է իրավունքի միջոցով, իսկ արդարադատությունն սպասարկում է մարդուն, այլ ոչ թե մարդը՝ արդարադատության մեխանիզմին: Այն պարտավորեցնում է պետությանը հարգել հանցագործության մեջ մեղադրվող անձի պատիվն ու արժանապատվությունը, մինչև նրա մեղավորությունն ապացուցվի խիստ սահմանված դատավարական ընթացակարգով: Այս կերպ ապահովվում է հասարակական շահի և անձնական իրավունքների հավասարակշռությունը, որտեղ անձի անհիմն դատապարտումը պետք է բացառվի անգամ պատասխանատվությունից խուսափելու գնով: Այս մոտեցումն է, որ տարբերակում է իրավական և հումանիստական արդարադատությունը ռեպրեսիվ արդարադատությունից:

Այս առումով բավականին ընդգրկուն ուսումնասիրություն է կատարել Օ. Ի. Ցիբուլևսկայան: Ըստ հեղինակի, որի հետ համակարծիք ենք, անմեղության կանխավարկածը ոչ միայն իրավական սկզբունք է, այլև բարձրագույն բարոյական և հումանիստական արժեք է: Այն ապահովում է ոչ միայն արդար դատաքննության իրավունքի իրացումը, այլև մարդու արժանապատ-

վության, ազատության և հասարակական իրավագիտակցության պահպանությունը: Սա հիմնարար սկզբունք է, որը պաշտպանում է անհատին պետական կամայականությունից և ապահովում է նրա իրավունքների իրացումը նույնիսկ հնարավոր բարդ իրավիճակներում: Հեղինակն ընդգծում է, որ անմեղության կանխավարկածը բացառում է կանխակալ վերաբերմունքը, միակողմանի մեղադրական կողմնակալությունը և արգելում է քաղաքացիների՝ միայն ենթադրությունների վրա հիմնված ցանկացած մեղադրանք: Այս սկզբունքն արգելում է անձին պատասխանատվության ենթարկել կամ «խարանել» դատավճռից առաջ՝ ապահովելով յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքների իրացումը (Цыбулевская, 2010, էջ 571-573): Քննության առնելով հեղինակի տեսակետը՝ կարելի պնդել, որ այս ըմբռնմամբ անմեղության կանխավարկածը ստանում է բարձրագույն բարոյահեն իրավական իդեալի արժեք: Սույն սկզբունքը խարսխված է մարդկային արժանապատվության և ազատության նկատմամբ հարգանքի վրա, ուստի մեղադրյալի անմեղության պաշտպանության նշանակությունն անցնում է զուտ իրավական դաշտից և ձեռք է բերում բարոյական հարթություն: Անմեղության կանխավարկածը հանդես է գալիս իրավունքի և բարոյականության միջև կապող օղակ՝ վերահաստատելով հումանիտական արժեքների առաջնայնությունը պետության պատժիչ միտումներից:

Ստացվում է, որ անմեղության կանխավարկածը հումանիտական երաշխիք է՝ հիմնված բոլոր մարդկանց բարեխղճության և արժանապատվության կանխավարկածի վրա: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր մարդ համարվում է ոչ միայն իրավաբանորեն, այլև բարոյապես անմեղ, քանի դեռ ապացույցներով չի հաստատվել հակառակը: Այս սկզբունքը գտնվում է իրավունքի և բարոյականության հատման կետում: Այն ապահովում է օրենքի գերակայությունը, քանի որ պաշտպանում է անհատին անհիմն ճնշումից, ապահովում է բարձր ստանդարտներ ապացուցման գործընթացում, թույլ չի տալիս դատարաններին առաջնորդվել կանխակալ վերաբերմունքով:

Ընդհանրացնելով կարելի է պնդել, որ անմեղության կանխավարկածի իրավական բնույթի շուրջ ընթացող տեսական վեճը վկայում է այդ սկզբունքի՝ իրավական համակարգում ունեցած բացառիկ դիրքի մասին: Այս սկզբունքը, ծնվելով քրեական դատավարության ոլորտում, իր բովանդակությամբ գերազանցում է դրա սահմանները: Այն չի կարող վերագրվել ոչ ընդհանուր իրավական, ոչ էլ զուտ ճյուղային կանխավարկածների դասին: Իր կառուցվածքային ու գործառնական հատկանիշներով անմեղության կանխավարկածը հանդես է գալիս որպես միջճյուղային սկզբունք՝ ձևավորելով ամբողջ իրավական համակարգի հիմքում ընկած արժեքային չափորոշիչ, առանց իրաժարվելու կոնկրետ ոլորտներում ունեցած նորմատիվ դրսևորումներից:

Քննարկում

Անմեղության կանխավարկածի թե՛ օրենսդրական սահմանման, թե՛ մասնագիտական-տեսական դիտարկման կարևորությունը և դրա շուրջ մշտապես առկա գիտական աղմուկը հիմնավորված է անմեղության կանխավար-

կազմի խախտման վտանգներով: Անմեղության կանխավարկածի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն քրեական դատավարության տեսանկյունից, այլև ավելի լայն համատեքստում՝ մարդու իրավունքների պաշտպանության շրջանակներում: Այս սկզբունքի խախտումը կամ սահմանափակումը կարող է հանգեցնել իշխանության չարաշահման, դատական կամայականությունների, անմեղ անձանց նկատմամբ անհիմն մեղադրանքների և քրեական հետապնդումների աճի: Հիմնավոր է մեր կողմից այն տեսակետի առաջադրումը, որ պետության՝ անմեղության կանխավարկածի սկզբունքից նահանջը անմիջական սպառնալիք է իրավակարգին և մարդու իրավունքներին: Եթե այս սկզբունքը անտեսվում է, բացվում է կամայականության ճանապարհը: Իրավապահ մարմինները կարող են անձանց ենթարկել քրեական պատասխանատվության՝ առանց բավարար ապացույցների, ինչը խաբխուրում է հասարակության վստահությունը արդարադատության նկատմամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մատնանշում է անմեղության կանխավարկածի խախտումն արձանագրող մի շարք գործեր: Օրինակ՝ Ստիրմանովն ընդդեմ Ռուսաստանի (Stirmanov v. Russia, 2019) գործում Դատարանը եզրակացրեց, որ խախտվել է ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ կետը, քանի որ մեղադրող կողմի կողմից օգտագործված իրավական ձևակերպումները մինչև օրինական ուժի մեջ մտած դատավճիռը անձին ներկայացրել էին որպես մեղավոր: Բավչարն ընդդեմ Սլովենիայի (Bavčar v. Slovenia, 2019) գործում արձանագրվել է կանխավարկածի խախտում, քանի որ պետական բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ իրավական գնահատական պարունակող հրապարակային հայտարարությունները ստեղծել էին մեղավորության կանխակալ պատկերացում հասարակության մեջ: Նմանատիպ հետևություն է պարունակում նաև Ալենե դը Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի (Allenet de Ribemont v. France, 1995) որոշումը, որտեղ Դատարանը հաստատել է, որ ոստիկանության ներկայացուցիչների կողմից անձի ներկայացումը որպես հանցագործ՝ առանց դատավճիռի, հակասում է անմեղության կանխավարկածին: Թելֆներն ընդդեմ Ավստրիայի (Telfner v. Austria, 2001) գործում Դատարանը շեշտել է, որ անթույլատրելի է ապացուցման բեռի տեղափոխումը մեղադրյալի վրա, իսկ նրա լրությունը կամ մեղադրանքը մերժելը չի կարող դիտվել որպես մեղավորության ապացույց: Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի (Minelli v. Switzerland, 1983) գործում ՄԻԵԿ-ը նշել է, որ պետական մարմինները պարտավոր են խուսափել մեղավորության հաստատման տպավորություն ստեղծող գնահատողական որևէ ձևակերպումից: Այս նախադեպերը հիմնավոր կերպով արձանագրում են, որ անմեղության կանխավարկածի խախտումները դրսևորվում են տարբեր ձևերով՝ պաշտոնատար անձանց անթույլատրելի հրապարակային հայտարարություններից մինչև ապացուցման բեռի անօրինական տեղափոխում և դատավարական երաշխիքների թուլացում:

Վերոշարադրյալից արդեն իսկ պարզ է դառնում, որ անմեղության կանխավարկածի պահպանումը հանդիսանում է յուրատեսակ արգելափակիչ՝ կանխելու իրավական համակարգի սահումը դեպի ճնշիչ մոդել, որտեղ ան-

ձի իրավունքները զոհաբերվում են պատժի շահերին:

Անմեղության կանխավարկածի հետ կապված խնդիրներից է նաև հասարակական կարծիքի և զանգվածային լրատվամիջոցների շարունակաբար աճող ազդեցությունը արդարադատության վրա: Ժամանակակից տեղեկատվական դաշտում (հատկապես սոցիալական ցանցերում և տարատեսակ կայքերում տեսակետների ազատ արտահայտման համատեքստում) մինչև դատական վճիռը կարող է ձևավորվել հանրային համոզմունք անձի մեղավորության վերաբերյալ: Սա խախտում է արդար դատաքննության իրավունքը, քանի որ մեղադրյալը, մինչ իր նկատմամբ գործի քննությունը և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով մեղավոր ճանաչվելը կամ արդարանալը, այդ գործոնների հետևանքով ինքնին դառնում է հանրային ճնշման զոհ, միաժամանակ հիշյալ ազդեցության հոգեբանական ներգործությունը առաջացնում է դատարանի՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի աչառու լինելու ենթադրյալ ռիսկեր:

Այսպիսով, անմեղության կանխավարկածի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն իրավական, այլև ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքների պաշտպանության տեսանկյունից: Այն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում իրավական կանխավարկածների շարքում, քանի որ չի սահմանափակվում դատավարական ընթացակարգերով, ուղղված է անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը, ձևավորում է արդարադատության և իրավական պետության հիմնասյուները:

Անմեղության կանխավարկածի սկզբունքի իրավաբանական բովանդակությանն անդրադարձել են բազում հայ և օտարերկրյա հեղինակներ: Օ. Ի. Ցիբուլսկայան, Ա. Ն. Օմարիևան անմեղության կանխավարկածը մեկնաբանում են որպես օբյեկտիվ իրավական սկզբունք, համաձայն որի պետությունը և հասարակությունը պարտավոր են մեղադրյալին վերաբերվել որպես անմեղի, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Սա նշանակում է, որ անձնական կարծիքներն ու կասկածները չպետք է ազդեն անձի պաշտոնական կարգավիճակի վրա. մինչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը նա հանցագործ չէ, այլ լիիրավ քաղաքացի, ում իրավունքները ենթակա են պատշաճ պահպանման: Հեղինակներն ընդգծում են, որ այս սկզբունքը բացառում է կանխակալ վերաբերմունքը կասկածյալի նկատմամբ՝ պահպանելով նրա իրավական կարգավիճակը և թույլ չտալով նրան վերաբերվել որպես մեղադրյալի (ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում կասկածյալի ինստիտուտն այլևս առկա չէ, սակայն դա չի խանգարում սույն սկզբունքի բովանդակային առումով պատշաճ կենսագործմանը): Հեղինակները նոր մոտեցմամբ են արտահայտում այն հանգամանքը, որ չփարատված ողջամիտ կասկածները մեկնաբանվում են ի օգուտ մեղադրյալի: Ըստ նրանց՝ *չապացուցված մեղավորությունը հավասարեցվում է ապացուցված անմեղության* (Цыбулевская, Омаријева, 2015, էջ 51): Այսպես՝ հեղինակներն առավել ցայտուն փորձում են ներկայացնել այն, որ եթե արդարադատության համակարգը կանգնում է ռիսկերի երկրնտրանքի առաջ՝

դատապարտել անմեղին, թե ազատ արձակել մեղավորին, ընտրվում է երկրորդ տարբերակը, քանի որ անմեղ մարդու դատապարտումը համարվում է անընդունելի: Այս մոտեցումը երաշխավորում է, որ մարդու իրավունքների սահմանափակում (պատժի կիրառումը) հնարավոր է միայն այն դեպքում, երբ դատարանը լիովին վստահ է մեղադրանքի հիմնավորվածության մեջ, ինչը պետք է հաստատվի արդար դատաքննության արդյունքում: Դատական սխալի բացառման առաջնահերթությունը, նույնիսկ եթե դրա հետևանքով որոշ հանցագործներ խուսափեն պատասխանատվությունից, ընդգծում է արդարադատության հումանիստական էությունը: Այս համատեքստում անմեղության կանխավարկածը հանդես է գալիս ոչ միայն որպես ապացուցման բեռի բաշխման կանոն, այլև որպես բարոյահեն իրավական ուղեցույց: Արդարադատության համակարգը նպատակ ունի գործել զգուշությամբ և մարդասիրությամբ՝ բացառելու ամենավտանգավոր հետևանքը՝ անմեղ անձի անօրինական դատապարտումը:

Անմեղության կանխավարկածի իրավաբանական էությունը բացահայտվում է դրա բովանդակությունը կազմող հիմնարար դրույթների միջոցով: Դրանք են անձի անմեղությունը, որը գործում է մինչև հակառակի ապացուցումը, մեղքի ապացուցման բեռի վերագրումը մեղադրանքի կողմին, չփառաված կասկածները մեղադրյալի օգտին մեկնաբանելու պահանջը, մեղադրական դատավճիռը ենթադրությունների հիման վրա կայացնելու արգելքը, մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրացումը և նրա համար բարենպաստ պայմանների ապահովումը: Միայն այս տարրերը համակողմանի ուսումնասիրելով՝ կարելի է լիարժեքորեն հասկանալ անմեղության կանխավարկածի էությունը և դրա իրացման գործընթացը (Владимиров, 2022, էջ 22):

Հ. Ա. Կարանդավիլին ընդգծում է, որ անմեղության կանխավարկածի իրավաբանական էության բարդությունը պայմանավորված է նրանով, որ այն ընդգրկում է և՛ դատավարական, և՛ նյութաիրավական հարթությունները: Անմեղության կանխավարկածի դատավարական բնույթը արտահայտվում է ապացուցման գործընթացում: Այս դեպքում այն հանդիսանում է քրեական դատավարության սկզբունք, որն ազդում է մեղադրանքի և պաշտպանության կողմերի դերերի բաշխման, ապացուցման գործընթացի, մեղադրական դատավճիռի կայացման ընթացքի վրա: Այս համատեքստում անմեղության կանխավարկածը ապացուցման իրավունքի հիմնարար սկզբունք է, որը կիրառվում է դատարաններում և պահանջում է ապահովել սկզբունքը կազմող և վերը թվարկված հիմնարար դրույթների պահպանումը:

Անմեղության կանխավարկածի նյութաիրավական բնույթը դրսևորվում է դատավարական գործընթացներից դուրս, հատկապես, հասարակական և պետական հարաբերությունների վրա ազդեցության համատեքստում: Նյութաիրավական առումով անմեղության կանխավարկածին չի վերագրվում ապացուցման բեռի բաշխման պահանջ: Այն առավելապես ուղղված է անձի իրավական կարգավիճակի սահմանմանը և դրա պաշտպանությանը՝ մինչև նրա մեղավորությունը հաստատող փաստերի փարատումը: Մինչ այդ որևէ կողմ իրավունք չունի մեղադրյալին անվանել հանցագործ, օրինակ, լրատ-

վամիջոցներն իրավունք չունեն մեղադրյալին հրապարակայնորեն ներկայացնել որպես հանցագործ՝ առանց իրավական ապացույցների, քանի որ դա խախտում է նրա վարկանիշի և անձնական հեղինակության պաշտպանությունը (Каландаришвили, 2021, էջ 30):

Այս տեսանկյունից անմեղության կանխավարկածը ձեռք է բերում արժեքաբանական (աքսիոլոգիական) նշանակություն, քանի որ այն ոչ միայն ապահովում է օրենքի գերակայությունը, այլև պաշտպանում է անհատի պատիվը, արժանապատվությունը և հասարակության մեջ նրա կարգավիճակը: Օ. Ի. Ցիբուլևսկայայի դիտարկմամբ, անմեղության կանխավարկածի էությունն այն է, որ այն կանխում է հասարակության և պետական մարմինների կողմից կանխակալ վերաբերմունքը մեղադրյալի նկատմամբ, ապահովելով արդարադատության իրականացման հավասարակշռված մոտեցում (Цыбулевская, 2010, էջ 571):

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ անմեղության կանխավարկածը միաժամանակ դատավարական սկզբունք է, որը պաշտպանում է մեղադրյալին դատարանում, և նյութաիրավական սկզբունք է, որը կանխում է անհիմն իրավական սահմանափակումները մինչև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը: Այս սկզբունքի կրկնակի բնույթը նշանակում է, որ դրա խախտումները կարող են տեղի ունենալ ոչ միայն դատավարական փուլում (օրինակ՝ ապացուցման պարտավորության անցում պաշտպանական կողմին), այլև դատավարությունից դուրս (եթե մեղադրյալը մինչև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը արդեն ենթարկվում է հասարակական դատապարտման): Հետևաբար, այս սկզբունքի լիարժեք կիրառումը պահանջում է պաշտպանել այն բոլոր փուլերում՝ նախքան դատավարությունը, դրա ընթացքում և նույնիսկ դատավճիռից հետո:

Ինչպես արդեն նշվել է, մասնագիտական շրջանակներում շարունակական բնույթ են կրում քննարկումներն անմեղության կանխավարկածը համաիրավական կամ ճյուղային համարելու շուրջ: Անվիճելի է այն փաստը, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը ձևավորվել և առավել ամբողջական զարգացում է ստացել քրեական դատավարության ոլորտում, սակայն դրա ազդեցությունը նկատելի է նաև իրավունքի այլ ճյուղերում: Սահմանադրական իրավունքում այն հանդես է գալիս որպես քրեական արդարադատության ընդհանուր սկզբունք և մարդու իրավունքների կարևորագույն երաշխիք: Շատ երկրների սահմանադրություններ (օրինակ, ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածը, ՌԴ Սահմանադրության 49-րդ հոդվածը) բացահայտորեն ամրագրում են, որ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Սա անմեղության կանխավարկածին վերագրում է ընդհանուր պարտադիր բնույթ ողջ իրավական համակարգի համար և պարտավորեցնում պահպանել այս սկզբունքը ցանկացած իրավական ընթացակարգում:

Ա. Ղամբարյանն անմեղության կանխավարկածը դիտարկելիս ընդգծում է, որ այն ծագել և կայացել է քրեական դատավարության համատեքստում:

Նա գտնում է, որ թույլատրելի չէ այս սկզբունքը համարել համաիրավական, քանի որ, կասկածի տակ չդնելով Սահմանադրության մեջ ամրագրված նորմերի վերաբերելիությունն իրավունքի բոլոր ձյուղերին, ինչպես նաև չհերքելով իրավաբանական պատասխանատվության սկզբունքների փոխկապվածությունը և ընդհանուր գծերի առկայությունը, պետք է հստակ տարբերակել անմեղության կանխավարկածն իրավաբանական պատասխանատվության այլ, մասնավորապես՝ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքից: Այս ամենից ելնելով՝ հեղինակը չի ընդունում անմեղության կանխավարկածն իրավունքի բոլոր ձյուղերի վրա տարածելու մոտեցումը և ընդգծում է, որ ուսումնասիրվող սկզբունքն առավելապես կիրառելի է հանրային իրավական պատասխանատվությունների դեպքում՝ հաշվի առնելով տվյալ ոլորտի առանձնահատկությունները (Ղամբարյան, 2005, էջ 6-10):

Անմեղության կանխավարկածը կիրառելի է ոչ միայն սահմանադրական, քրեադատավարական, այլև քաղաքացիական, վարչադատավարական, հարկային, աշխատանքային և այլ ոլորտներում, սակայն համաիրավական բնույթ չի կրում և բոլոր ոլորտներում նույնական կիրառություն չունի: Անմեղության կանխավարկածը չի կարող համարվել միայն քրեադատավարական իրավունքի սկզբունք, այսինքն՝ ձյուղային), քանի որ այն ունի ավելի լայն կիրառություն և տարածվում է բազմաթիվ իրավական հարաբերությունների վրա: Այդ պատճառով այն համարվում է միջձյուղային իրավական սկզբունք, որն ապահովում է պետության և անհատի միջև իրավական հավասարակշռությունը տարբեր իրավական ոլորտներում՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Եզրակացություն

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ իրավական կանխավարկածների համակարգում: Հոդվածում բացահայտվում է, որ այն էապես տարբերվում է իրավունքում գոյություն ունեցող մյուս կանխավարկածներից. եթե վերջիններս հիմնականում կատարում են գործընթացային-օժանդակ գործառնություն՝ դյուրացնելով իրավական փաստերի ապացուցումը, ապա անմեղության կանխավարկածը ծառայում է առավել բարձր նպատակի՝ հանդիսանալով արդարության և մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք իրավական համակարգում:

Արդարացվում է անմեղության կանխավարկածի երկակի՝ գործընթացային և նյութական-իրավական բնույթը: Հոդվածում ցույց է տրվում, որ այն ունի երկսայր բնույթ. որպես գործընթացային սկզբունք՝ այն կարգավորում է ապացուցման բեռի բաշխումը և դատավարական ընթացակարգը, իսկ որպես նյութական-իրավական (սահմանադրական) սկզբունք՝ ազդում է մեղադրյալի իրավական կարգավիճակի վրա՝ նաև դատարանից դուրս: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ սկզբունքի խախտումները կարող են դրսևորվել ոչ միայն դատարանում (գործընթացային մակարդակում), այլև դրանից դուրս՝ օրինակ՝ անձի իրավունքների վաղաժամ սահմանափակման կամ մեղադրանքի հրապարակային հաստատման միջոցով՝ մինչ դատական վճիռը:

Բացահայտվել է անմեղության կանխավարկածի սահմանադրաիրավական նշանակությունը՝ որպես իրավունքների և ազատությունների երաշխիք: Հոդվածում փաստարկվում է, որ սկզբունքի ամրագրման փաստը սահմանադրական մակարդակում (օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածում) նրան հաղորդում է իրավական բարձրագույն ուժ և այն դարձնում է պետության համար պարտադիր: Սկզբունքը դիտարկվում է որպես իրավական պետության անկյունաքարային սկզբունք, առանց որի անհնար է մարդու իրավունքների իրական պաշտպանությունը և արդար դատաբնության իրականացումը:

Բացահայտված է անմեղության կանխավարկածի արքիոլոգիական (արժեքային) դերը և դրա ազդեցությունը իրավագիտակցության վրա: Հոդվածի հետազոտական արդյունքները ցույց են տալիս, որ այս սկզբունքն ունի խորը սոցիալ-բարոյական բնույթ, այն ձևավորում է իրավապահ համակարգի աշխատակիցների (դատավորներ, քննիչներ, դատախազներ) մասնագիտական իրավագիտակցությունը՝ օբյեկտիվության և մեղադրյալի իրավունքների նկատմամբ հարգանքի ոգով: Միևնույն ժամանակ, այն դաստիարակում է հասարակությանը՝ գերծ մնալ վաղաժամ դատողություններից: Տեղեկատվական արդի հասարակության պայմաններում շեշտադրվում է սկզբունքի պաշտպանության նոր գիտական հիմնավորումը՝ զանգվածային լրատվամիջոցների և հանրային կարծիքի ճնշման դեմ՝ մինչև դատական ակտի ընդունումը:

Ներկայացվել են օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ՝ անմեղության կանխավարկածի լիարժեք իրագործումն ապահովելու նպատակով: Չսայած այն հանգամանքին, որ երկրների զգալի մասում, այդ թվում և ՀՀ-ում, թե՛ Սահմանադրության (66-րդ հոդված), թե՛ քրեադատավարական օրենսդրության մակարդակում (ՀՀ ՔՊՕ 17-րդ հոդված) սահմանվում են անմեղության կանխավարկածի խախտումը բացառող դրույթները, այնուամենայնիվ, գործնական քիչ չեն կանխավարկածի՝ ուղղակի կամ անուղղակի խախտման դեպքերը:

Այս առումով հարկ է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ գլխում ընդգրկված անմեղության կանխավարկածի սկզբունքը հանդիսանում է մարդու իրավունքների ամբողջ համակարգի էությունը (առանցքը) բովանդակող՝ մարդու արժանապատվության իրավական արտահայտությունն ու երաշխիքը, և որպես գերակայող սահմանադրական արժեք՝ ունի բացառիկ դիրք ու սահմանադրական ուժով ամրագրված՝ անմիջականորեն կիրառելի նշանակություն:

Հաշվի առնելով, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումը կարող է հանգեցնել իրավական, սոցիալական և բարոյական էական հետևանքների, այդ թվում՝ իրավական պետության սահմանադրական հիմքերի խախտման, առաջարկվում է, վերաբերելի իրավական գործիքակազմերի մշակմամբ ու ներդրմամբ, ըստ էության, բացառելով ազատ խոսքի և տեղեկատվության ազատության անհիմն սահմանափակման ռիսկերը, ամրագրելով Սահմանադրությամբ և միջազգային իրավունքով պահանջվող՝ անմեղության կանխավարկածի խախտում չենթադրող բացառությունների չափանիշը, ՀՀ քրեա-

կան օրենսգրքի՝ «Սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 28-րդ գլուխը, որպես ձևական հանցակազմի, լրացնել «Անմեղության կանխավարկածը խախտելը» վերտառությամբ նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. **«Անմեղության կանխավարկածը խախտելը՝ մինչ օրինական ուժի մեջ մտնող մեղադրական դատական ակտի կայացումը պաշտոնապես անձի կողմից անձի մեղավորության վերաբերյալ հրապարակային բնույթի հայտարարություններ կատարելը»:** Առաջարկվում է որպես որակյալ հանցակազմ նախատեսել՝ նույն արարքը մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարելը, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարելը, անգուշությամբ այլ ծանր հետևանք առաջացնելը: Հոդվածով, միաժամանակ, նախատեսել, որ վերջինիս գործողությունը չի տարածվում վարույթի հանրային մասնակիցների և դատարանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավաչափ դատավարական գործողությունների, ինչպես նաև՝ անձի մեղավորության վերաբերյալ դատողություն կամ հստակ մեղադրական ձեւակերպում չպարունակող՝ փաստական բնույթի տեղեկության տարածման կամ տեղեկատվական բնույթ կրող հրապարակային հայտարարությունների վրա:

Առաջարկվող նորմով «պաշտոնատար անձ» հատուկ սուբյեկտի առանձնացումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ կայացման փուլում գտնվող ժողովրդավարության արդի պայմաններում, չհաշված զանգվածային լրատվության միջոցները, առավել հաճախ հենց պաշտոնատար, ներառյալ՝ քրեական արդարադատությանն առնչվող, ինչպես նաև՝ քաղաքական նկատառումներով գործող հանրային պաշտոն գրադեցնող անձանց գործողություններով են խախտվում անմեղության կանխավարկածի դրույթները:

Լրացումն առաջարկվում է իրավական պետության փիլիսոփայության ընկալմամբ՝ բացառելու համար ունեցած բացառիկ գործիքակազմերի կիրառման արդյունքում ստացած տվյալների՝ պետության կողմից որպես «քաղաքական գործիքի» կամ «իրավական նպատակին հասնելու միջոցի» ապօրինի օգտագործման ու տարածման ռիսկերը, ապահովելու համար անմեղության կանխավարկածի՝ հռչակագրային նորմի փոխարեն՝ որպես քաղաքական և սահմանադրական երաշխիքի անմիջականորեն կիրառելիությունն ու պաշտպանությունը, կանխելու պաշտոնատար անձանց կողմից անձի նկատմամբ իրավական ուժ չունեցող դատողություններով հանրային կարծիքի ձևախեղումն ու արդարադատության իրականացման վրա բացասական ազդեցությունը:

Վերոգրյալի համատեքստում հատկանշական է քրեական օրենսգրքի՝ «Սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ գլխով նախատեսված՝ քրեական օրենքով պաշտպանվող սահմանադրական առանձին իրավունքների հետ համեմատության մեջ անմեղության կանխավարկածի բնույթի ու սոցիալական նշանակության արժեքային կշիռը, դրա հնարավոր խախտմամբ՝ վերջիններիս համեմատ առաջանալիք հնարավոր անբարենպաստ հետևանք-

ների բովանդակությունը: Խոսքը, մասնավորապես, ի թիվս այնի, վերաբերում է «Բժշկական գաղտնիք հրապարակելը» (հոդված 205), «Անձին տեղեկություններ տրամադրելուց հրաժարվելը» (հոդված 208), «Արտոնագրային իրավունքը խախտելը» (հոդված 228, և այլ նորմեր) վերտառությամբ նորմերին, որոնցով պաշտպանվող շահերի՝ առանձին դեպքերում խախտումները, ողջամտորեն չեն կարող գերազնահատվել իրավունքի հիերարխիայում իրավական, բարոյական և հասարակական առումներով համակարգային տեղ զբաղեցնող անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման համեմատ և առաջացնել ավելի անբարենպաստ իրավիճակներ, քան անմեղության կանխավարկածի խախտման դեպքում:

Հաշվի առնելով, որ մինչ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտի կայացումը զանգվածային լրատվության միջոցների կողմից, սակավ ինքնուրույնության, կախյալ և ոչ պրոֆեսիոնալ վիճակի կամ քաղաքական ուղղորդման արդյունքում չեզոքության սահմաններից դուրս տվյալների միակողմանի, երբեմն՝ էականորեն չափազանցված հանրայնացումը և անձի մեղավորության՝ որպես փաստի՝ կողմնակալ ներկայացումը իբրև արդար դատաքննության իրավունքի և հասարակական կարծիքի վրա բացասական ազդեցություն ունեցող գործոն հանդիսանում է ժամանակակից հասարակության բնութագրիչ, ուստի այդ առումով առաջարկվում է նաև իրավասու լիազոր մարմնի կողմից համապատասխան հարկադրանք (պատասխանատվության մեխանիզմներ, այդ թվում՝ վարչական պատասխանատվություն) կիրառել այն լրատվամիջոցների համար, որոնք նախքան դատվճիռը անձին հրապարակայնորեն ներկայացնում են որպես հանցագործ:

Այս միջոցառումները միտված են ապահովելու Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքի լիարժեք իրագործումը և ամրապնդելու հասարակության վստահությունը արդարադատության ինստիտուտների նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

- Ղամբարյան, Ա. (2005). Անմեղության կանխավարկածը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: Եր.: «Կախա» հրատ.
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն) Հասանելիությունը: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 ա (XXI) բանաձևով և բաց է ստորագրելու, վավերացնելու և միանալու համար, ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին՝ 49 հոդվածի համաձայն): Հասանելիությունը: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500>
- Баумжиц, К. А. (2019). Презумпция невиновности в современном праве: подходы к понятию, значение и содержание. — Текст: непосредственный // Молодой ученый, № 24 (262).
- Владимиров, В. С. (2022). Презумпция невиновности и ее значение для доказывания // Актуальные вопросы юридических наук: материалы XVII Междунар. науч. конф.

- Каландаришвили, Х. А. (2021). Свойства уголовно–процессуальных презумпций// Сибирские уголовно–процессуальные и криминалистические чтения, № 4.
- Мамонтова Э. А., Дятчина, Д. А. (2022). Принцип презумпции невиновности: понятие и сущность. — Текст : непосредственный // Молодой ученый, № 7 (402).
- Цыбулевская, О. И. (2010). Презумпция невиновности: нравственный аспект // Юридическая техника, № 4.
- Цыбулевская, О. И., Омариева, А. Н. (2015). Презумпция невиновности: аксиологическое измерение // Вестник ПАГС, № 4 (49).
- Berisha, I. (2020). The principle of the presumption of innocence: European Journal of Economics, Law and Social Sciences, IIPCCL Publishing, Graz–Austria, Vol. 4 No.
- Allenet de Ribemont v. France*, Application No. 15175/89, *European Court of Human Rights* (1995).
- Bavčar v. Slovenia*, Application No. 17053/20, *European Court of Human Rights* (2019).
- Minelli v. Switzerland*, Application No. 8660/79, *European Court of Human Rights* (1983).
- Stirmanov v. Russia*, Application No. 31816/08, *European Court of Human Rights* (2019).
- Telfner v. Austria*, Application No. 33501/96, *European Court of Human Rights* (2001).
- Zhiyuan, G. (2023). The presumption of innocence in China: theoretical debates and practical problems: *China Law Review* 15(1).

Боря Чилингарян

*Исполняющий обязанность начальника управления по расследованию транснациональных и иных преступлений коррупционной направленности
Антикоррупционного комитета РА,
соискатель кафедры правоведения Международного университета Евразия
Эл. адрес: boryachilingaryan@gmail.com*

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В СИСТЕМЕ ЮРИДИЧЕСКИХ ПРЕЗУМПЦИЙ: СУЩНОСТЬ И ЮРИДИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ

В статье исследуется место и значение презумпции невиновности в системе юридических презумпций, с акцентом на её сущность и содержание. Основная проблема исследования заключается в раскрытии многослойного содержания презумпции невиновности, так как она часто воспринимается однозначно, несмотря на её глубокое юридическое, социальное и моральное значение. Цель работы — проанализировать презумпцию невиновности как межотраслевой юридический принцип, разъяснить её процессуальные и материально–правовые особенности, а также показать важность этого принципа в системе правосудия. Новизна статьи заключается в раскрытии презумпции невиновности не только как процессуального, но и как материально–правового явления, а также в её представлении как юридической и гуманистической ценности, что зачастую остаётся вне рамок других исследований. Практическое значение работы выражается в том, что уточнение содержания и особенностей применения презумпции невиновности позволит повысить эффективность правосудия, предотвратить злоупотребления властью, а также обеспечить надлежащую

защиту прав человека. Это создаёт возможность более чёткого понимания границ и характера применения презумпции невиновности как в юридической практике, так и в процессе развития законодательства.

Ключевые слова: юридическая презумпция, презумпция невиновности, процессуальный принцип, материально-правовой принцип, правовое государство, эффективность правосудия, межотраслевой принцип, защита прав человека.

Borya Chilingaryan

*Acting head of the Department for the Investigation of Transnational and other corruption-related crimes, Anti-corruption committee of the republic of Armenia,
Ph.D.Student of the Law Department at Eurasia International University
Email: boryachilingaryan@gmail.com*

THE PRESUMPTION OF INNOCENCE IN THE SYSTEM OF LEGAL PRESUMPTIONS: ESSENCE AND LEGAL CONTENT

The article examines the place and significance of the presumption of innocence within the system of legal presumptions, focusing on its essence and content. The main problem of the study is to clarify the multilayered nature of the presumption of innocence, as it is often perceived unambiguously, despite its profound legal, social, and moral significance. The purpose of the work is to analyze the presumption of innocence as a cross-sectoral legal principle, to explain its procedural and substantive law features, and to demonstrate the importance of this principle in the justice system. The novelty of the article lies in revealing the presumption of innocence not only as a procedural but also as a substantive law concept, and in presenting it as a legal and humanistic value, which often remains outside the scope of other studies. The practical significance of the work is manifested in the fact that clarifying the content and peculiarities of the application of the presumption of innocence will allow us to increase the efficiency of justice, prevent abuse of power, and ensure proper protection of human rights. This enables a clearer understanding of the boundaries and nature of the application of the presumption of innocence both in legal practice and in the process of legislative development.

Key words: legal presumption, presumption of innocence, procedural principle, substantive law principle, rule of law, efficiency of justice, inter-branch principle, protection of human rights.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. ապրիլի 7-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. ապրիլի 15-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին: